

ՊԵՏԱԿԱՆ



ԹԱՏՐՈՆԻ

ԳՐԱԴԱՐԱՆ

I

ԲԱԺԱՆՄՈՒՐԲ

№ 1007

Յ Ե Բ Ե Գ Ա Ն

B-211

B-1061

ԴԱՍԱՐԱՆԿԱՆ ՓՈՒՍԵԴՐՈՒԹԻՒՆԸ

Դասակ. 1 դործողութեամբ. հեղ. Օլգա Շտայկեր, թարգմ. Լ. Բարայեան.

Ա Ն Ջ Ի Ն Ք

Դրիգոր Վեհապետեան.

Արամ, նրա որդին, Ա. դասարանի աշակերտ:

Օրիորդ Հայկանուշ, նրա քեռին:

Վարդուհի, Վեհապետեանի տան տնտեսուհին.

Գործողութիւնը կատարում է Վեհապետեանի սանը:



Թ Ի Յ Լ Ի Ս

Տպարան «Նալեժդա» Տեհատրալնի փող. № 7.

1 9 1 3

(Տեսարանը ներկայացնում է Վեհապետեանի համայնի բնակարանի սենեակներից մեկը, որ երեք դուռ ունի: Սենեակի այ կողմում դրած է մի սեղան, որի վրայ սուրճի բաժակներ կան: Սեղանի շուրջը արուներ են շարած: Սենեակի կահաւորութիւնը սովորական է):

1). ՎԱՐԴՈՒՀԻ

(Սուրճի սեղանը կարգի բերելով): Վերջապէս նախաճաշիկի համար ամեն ինչ պատրաստ է. այժմ օրիորդ Հայկանուշը կարող է գալ. բայց նա դեռ քնած է: Ասենք նրան իսկապէս մեղադրել էլ չի կարելի, որովհետեւ մի երկար և յոգնեցուցիչ ճանապարհորդութիւնից նոր է վերադարձել, իսկ պարոն Վեհապետեանն էլ, որ բացի ինձանից, բոլորին էլ հաճոյանալու բնաւորութիւն ունի, իր քննու պատճառով այսօր սովորականից աւելի երկար է քնում: Բայց մեր Արամը ձեր մնաց: Ինչո՞ւ է այսքան ուշանում, Չէ՞ որ նա պէտք է ուսումնարան գրնայ: Ա՛խ Աստուած իմ, Աստուած: Այդ խեղճ երեխան ինչեք տեսն սովորելու չէ դատապարտւած. դրա վրայ աւելցրու և լատիններէնը, որից ոչ մի խելացի մարդ բան չի հասկանում: Շատ բնական է, որ նա լատիններէնից ոչինչ չի հասկանայ և հէնց այդ է պատճառը, որ նա գրեթէ միշտ իւր քթի տակ մտնում է, երբ լատիններէնի դասագիրքը ձեռքն է անում: Ախ իմ խեղճ Արամ: Սփսսո որ խեղճ Վարդուհիդ այդ բանում քեզ չի կարող օգնել: Աստուած գիտէ, թէ ես որքան եմ Արամին սիրում: Չարմաշուի էլ չէ, նա հազիւ մի տարեկան էր, երբ ես մտայ այս տանը ծառայելու, նրան խնամեցի, մեծացրի, այնպէս որ նա այժմ առաջին դասարանի աշակերտ է: Խոստովանանք լինի, ես բոլորովին չեմ էլ հասկանում, թէ որն է առաջին դասարանը, Հա, միտքս ընկաւ. ես իսկապէս նոր եմ յիշում, որ այսօր դպրոցի աշակերտների դասարանական փոխադրութեան օրն է և կարող է պատահել, որ սիրելի Արամը այսօր փոխադրել հետեւեալ դասատունը: Հետեւեալ դասարանը կարծեմ երկրորդն է. բայց գուցէ և սխալուում եմ. այն այն, չեմ սխալուում երկրորդ դասարանն է: Բայց զարմանալի բան, ինչո՞ւ չի գալիս սուրճ խմելու և դպրոցը

տապելու: Նա իրաւունք չունի այսքան ուշ դպրոց գնալու: (Կանգնում է), Արամ, Արամ:

2) ՆՈՅՆ ԵՒ ԱՐԱՄ

ԱՐԱՄ.—(Մտնում է միջին դռնից պայուսակով եւ գլխարկը մետքին): Բարի լոյս, Վարդուհի: Սուրճ տուր, շուտ, ես շտապում եմ:

ՎԱՐԴՈՒՀԻ.—(Մի բաժակ սուրճ է լցնում եւ փչելով հովացնում է): Վերցրու Արամիկս, բայց զգուշացիր, որ բերանդ չայրես, սրովհետեւ սուրճը դեռ մի քիչ տաք է: (Փչում է): Փն, փու:

ԱՐԱՄ.—Մօրաքոյրը դեռ չէ՞ վարժուել:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Դեռ ոչ, Արամ, շատ բնական է, որ այժմ մօրաքոյրը քեզ հետաքրքրում է: Այսօր առաւօտեան նա կը պատրաստի այն բոլոր գեղեցիկ իրերը, որ նա իր հետ բերել է քեզ համար:

ԱՐԱՄ.—(Ոգեւորւած): Ես արդէն գիտեմ, թէ նա ինչ է բերել: Եթէ չեմ սխալուում, դրանք կապարից շինւած զինւորներ են, որոնք Ա՛րիկայում կուտան են վայրենիների մէջ: Շատ հիանալի բան պէտք է լինի: (Խօսելիս Վարդուհուց առնում է բաժակը եւ փորձում է խմել): Շաքարը քիչ ես գցել:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Ինչ ասացի՞ր, վայրենիների մէջ:

ԱՐԱՄ.—Ո՛չ.—սուրճի մէջ: (Հետագայ խօսակցութեան ժամանակ ծծելով խմում է իր սուրճը): Յետոյ, Վարդուհի, գիտե՞ս մօրաքոյրը բացի դրանից խոստացել է այսօր երեկոյեան ինձ կրկես տանելու:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Երջանիկ ես, Արամ, իսկ հայրիկդ ի՞նչ է ասում այդ մասին:

ԱՐԱՄ.—(հատուակելով): Հայրիկը... հայրիկը թոյլ է տալիս այսինքն, եթէ ես փոխադրեմ հետեւեալ դասատունը:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Իհարկէ, կըփոխադրուես, ես հաստատ համոզւած եմ:

ԱՐԱՄ.—Ա՛խ, եթէ ես արդէն փոխադրւած լինէի. գիտե՞ս Վարդուհի, ճիշտն ասած ես վախենում եմ:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Եթէ դու նոյն իսկ իբրև առաջին աշակերտ չփոխադրուես, գիտեմ որ այդ յիմար լատիններէնը, որից թագաւորն անգամ ոչինչ չի հասկանում, գոնէ...

ԱՐԱՄ.—Գիտե՞ս Վարդուհի, այդ անպիտան լատիններէնը հոգիս հանել է, յետոյ Քրանսերէնը, որի մէջ էլ բաւական թոյլ եմ, էլ չեմ ուզում խօսել աշխատանքի մասին, հայերէն թէ՛ լատիններէն, թւարանութեան և գեղարութեան մասին. այժմ դրանց բոլորին էլ գրողը տանի հա:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Բայց մի՞թէ այդ բոլոր առարկաներից էլ թոյլ ես:

ԱՐԱՄ.—Ա՛խ Վարդուհի, եթէ ես չփոխադրեմ, ոչ իրաւունք կունենամ կրկես գնալ, ոչ էլ կապարի զինւորները ստանալ, հայրիկը գոնէ այդպէս է ասել. իսկ քեզ արդէն յայտնի է, որ երբ նա մի բան է ասում, այնպէս էլ անում է: (Սուրճի բաժակը մի կողմըն է դնում եւ լալիս է): Ի՞նչ պէտք է անեմ ես այն ժամանակ, Վարդուհի:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Բայց ինչո՞ւ հիմիկաւնից—արդէն լալիս ես, սիրելիս, կարծես թէ արդէն մնացել ես միևնոյն դասարանում. եթէ այդպիսի բան պատահի, ես քեզ կօղնեմ և հայրիկիդ էլ կխնդրեմ, որ... Դէ, իսկ այժմ շտապել դպրոց, կարծեմ ճիշտ ժամը 9-ն է: Ժամը քանիսի՞ն վկայականը կբերես:

ԱՐԱՄ.—Ամենաուշը մի ժամից. այսօր միայն վկայականները կբաժանեն և դասատուութիւն բոլորովին չի լինի:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Ուրեմն ցոտեութիւն, սիրելիս, ցանկանում եմ ուրախ վերադարձ:

ԱՐԱՄ.—Շնորհակալ եմ, Վարդուհի (Գլխարկը դնում է գլխին, վերցնում է

պայուսակը եւ միջին դռնից դուրս է գնում):

3). ՆՈՅՆ, ՀԱՅԿԱՆՈՅՇ ԵՒ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ

(Կողքի դռնից մտնում են): ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—(Խալարով): Դպրոց գնաց Արամը:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Այն, այս բոլորիս զբնաց, պարոն Վեհապետեան:

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Այսքան երկար քաղցր դու տանը, ժամը արդէն ինն է, կարծեմ նա կուշանայ. (նստում է սուրճի սեղանի մօտ):

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—(պատրաստուում է սուրճ խմելու): Դու բաւական խիստ ես, սիրելի փեսայ:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Այսօր դպրոցում իսկապէս ոչինչ չէ լինելու, բացի աշակերտների փոխադրութիւնից: (Դնում է սենեակի միւս անկիւնը, մեւացնելով իբր քե մի բան է մտաւցել անկրոն):

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Դու չգիտես, Հայկանոյց, թէ որքան խիստ պէտք է վարել Արամի հետ Չնայելով որ նա մի լաւ երեխայ է, բայց ոչինչ չի ուզում սովորել, եթէ ես նրան միշտ պատիժներով չսպառնամ՝ Արամը բոլորովին բան չի անիլ:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Բայց Աստուած իմ, մեղաւորը նա չէ, այլ այն յիմար լատիններէնը, որից մարդ բան չի հասկանում:

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Խնդրեմ կտարած դղալի նման ամեն գործի մէջ չխտանուես: (Հայկանոյցին): Շատ ուրախ եմ, Հայկանոյց, որ ուզում ես մի քանի ամիս մեզ մօտ մնալ և հոգալ Արամի մասին: Մօր բացակայութիւնը նրա համար շատ զգալի է:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Ես ուզում եմ ամենից առաջ նրա հետ մեղմ վարել և նրա սիրտը դէպի ինձ գրաւել:

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Այն, և դրա համար էլ մի ամբողջ բեռ խաղալիքներ ես բերել նրա համար. բացի դրանից, խոստացել ես այսօր երեկոյեան նրան

կրկէս տանել. ես զրա դէմ ոչինչ չունեմ, Հայկանոյշ, բայց եթէ նա չփոխադրուի, պէտք է Արամին զրկել այդ բոլոր գլարձութիւններէց:

ՎԱՐԴՈՒՀԻ.—(Կամաց, մեկուսի.) Անողորմ և անսիրտ հայր:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Բայց չէ՞ որ Արամը քրոջս միակ երեխան է, փեսայ:

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Էլ ես ոչինչ չգիտեմ և պէ՛զում եմ ասածս:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—(Կանգնում եւ մօտեցնում է Վարդուհուն.) Ե՛րբ է վերագառնալու Արամը, Վարդուհի:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Ժամը 10-ին օրինո՞րդ:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Ուրեմն իսկոյն շտապիր մեր տան անկիւնում գտնուող վաճառականի մօտ և մի ֆունտ լաւ խաղող գնիր: Ես գիտեմ որ նա շատ է սիրում խաղողը, թող նա դրանով փոխադրութեան երկիւղից յետոյ մի քիչ կազդուրի:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Ա՛խ օրիորդ, դուք մի կատարեալ հրեշտակ էք: Համողւած եմ, որ Արամը զրա համար Հափից դուրս կուրախանայ:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Լաւ, լաւ, գնացէք շուտով խաղողի ետեւից, բայց զամբիւղը վերցրէք ձեզ հետ, որպէսզի խաղողը չճմուխի:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Շատ լաւ. ես իսկոյն կվերագառնամ, թանկագին օրինորդ: (Միջին դռնից դուրս ե գնում):

4) ՆՈՅՆՔ, ԱՌԱՆՅ ՎԱՐԴՈՒՀՈՒ

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Կարծեմ էլի նորից իմ դէմ ինտրիգներ սարքեցիր: Չուր ես աշխատում, Հայկանոյշ: Եթէ Արամը չփոխադրուի հետեւալ դասարանը, նորից եմ ասում քեզ որ ոչինչ չպէտք է ստանայ:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Բայց մենք ինչո՞ւ ենք դուր տեղը վիճում: Գուցէ Արամը հինգերորդ է տունը վերագառնալու:

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Ես, չորսով, երեքով էլ գոհ կլինեմ:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Բայց այն էլ ՚ի նկատի ունեցիր, որ նա դեռ 13 տարեկան չկայ:

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Աշխատասէր լինելու համար երեխայի տարիքը նշանակութիւն չունի: Զարմանալի երեխայ է Արամը: Առաջին բաժանմունքում նա չկարողացաւ այբուբենի բոլոր տառերը սովորել, երկրորդում 2+2 միշտ հինգ էր դուրս բերում, երրորդ բաժանմունքում ևս բառը միշտ մեծատառով էր գրում, կարծես կայսր լինի, և կարծում էր, որ իր հայրենի քաղաքը արևմտեան Հնդկաստանումն է գտնուում, իսկ առաջին դասարանումն էլ նրա լատիներէնը, ֆրանսերէնը, թւարանութիւնը և ուղղագրութիւնը կարծես չինարէն լինին: Խոստովանելի, Հայկանոյշ, որ Արամը արդէն չափը անց է կացրել: Ես ամեն տեսակ պատիժներ փորձել եմ նրա վերաբերմամբ: Երբ նա առաջին բաժանմունքումն էր, կանգնեցնում էի սենեակի անկիւնում, երկրորդում փայտով ձեծում էի, երրորդում եղած ժամանակ նրան ճաշից էի զրկում, իսկ այժմ էլ ուղում եմ նրան պատժել քո բերած ընծաներից և կըրկէս տանելուց զրկելով:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Փեսայ, գուցէ իրաւունք ունես, բայց միայն այս անգամ կցանկանայի քո ներողամտութիւնը խնդրել. դու էլ գիտես, տեսնում ես, որ ես հեռաւոր երկրից եկել եմ այստեղ և քրոջս որդուն առաջին անգամն եմ տեսնում. դրա համար խնդրում եմ, որ թոյլ տաս նրան մի քանի ընծաներ տալ և կրկէս տանել: Չէ՞ որ իւրաքանչիւր մօրաքոյր պարտաւոր է իր քրոջ որդուն գոնէ մի անգամ ուրախացնել: Թոյլ տուր ինձ այսօր նրան բաւականութիւն պատճառել և պատժիր նրան վաղը,—ինչպէս դու ցանկանում ես,—եթէ նա չփոխադրուի հետեւալ դասարանը:

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—(Ձեռքը նրան մեկնելով): Ես չեմ կարող քեզ մերժել, Հայկանոյշ, մանաւանդ որ դու այսօր առաջին անգամն ես ինձնից մի բան խնդրում: Ուրեմն ասածս միեւնոյնն է մնում, եթէ Արամը չփոխադրուի, կըպատժուի, բայց ոչ այսօր, և այն էլ ինչ ձեռով որ ես ցանկանամ:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Դու շատ բարի ես, փեսայ: Կցանկանամ մի բաժակ էլ սուրճ:

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Շնորհակալ եմ, Հայկանոյշ, ես արդէն վերջացրի նախաճաշիկս: Կուզես ինձ դէպի դահլիճ ուղեկցել, ես սովորաբար դահլիճում ընթերցանութեամբ եմ զբաղւում, երբ Վարդուհին այս սենեակը մաքրում է: Իսկ Արամը վերագառնալուց յետոյ կգնամ գրասենեակ:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Սիրով կուղեկցեմ քեզ, փեսայ. իսկ ինչ վերաբերում է Արամին՝ յոյս ունեմ, նա ուրախ սըրտով կվերագառնայ: (Երկուսն էլ կողքի դռնով դուրս են գնում):

5) ԱՐԱՄ, ՎԱՐԴՈՒՀԻ (ՁԱՄԲԻԴՂ ՁԵՌՔԻՆ ՆԵՐՄ Ե ՄՏԵՆՈՒՄ ՄԻՋԻՆ ԴՌՆՈՎ):

ԱՐԱՄ.—(Բոլորովին բուլացած): Այժմ ամեն ինչ վերջացաւ, Վարդուհի. չըզիտեմ թէ ինչպէս երևամ Հայրեկին: Ա՛խ:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Չ՛ը Արամ, ինչպէ՞ս ես արդէն վերագարձմք:

ԱՐԱՄ.—Վե՛րջապահները ժամը ութին բաժանել են, իսկ ես կարծում էի, որ ժամի 9-ին կը տան: Ես մեր աշակերտներից երկուսին պատահեցի փողոցում, որոնցից իմ ընկեր Պարոյրը վկայականս իր հետն էր վերցրել և ինձ տւեց:

ՎԱՐԴՈՒՀԻ.—(Լարւած): Վե՛րջը:

ԱՐԱՄ.—Վերջը ես իբրև ամենաառաջինս...

ՎԱՐԴՈՒՀԻ.—(Միջամտելով): Փոխադրու՛մ ես:

ԱՐԱՄ.—(Յանկարծակի սկսում է սաստիկ լաց լինել): Ո՛չ, մնացել եմ:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Ա՛յ քեզ բան: Բայց հանգստացիր, Արամ, գոնէ իբրև ամենաառաջին թոյլ աշակերտն ես մնացել դասարանում: Գոնէ մի անգամ ամենաառաջին դարձար, երեք քո ամբողջ կեանքում այդ առաջին անգամն է:

ԱՐԱՄ.—(Վկայականը հանում է գրքերի կապոցից): Տես, ինչ է գրւած, չէ փոխադրւում անբաւարար աշխատասիրութեան համար:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Արամ, դու գիտես, որ ես կարգաւ չգիտեմ, բայց քեզ արդէն հաւատում եմ:

ԱՐԱՄ.—Ա՛խ իմ գեղեցիկ կապուրդ գինւորներ և կրկէս: Այսօր կարծեմ կրկէսում բոլոր ձիերը կխաղան, երանի ես էլ այնտեղ լինէի:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Իհարկէ որ շատ լաւ կլինէր:

ԱՐԱՄ.—(Թաշկինակը երեսից հեռացնում է): Բայց, Վարդուհի, ես մի միտք եմ յղացել:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Դ՛ու:

ԱՐԱՄ.—Ասա, ինչդրեմ, Վարդուհի, ի՞նչ կլինի, եթէ հայրեկին ցոյց չտամ վկայականս:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Բայց չէ՞ որ նա շատ լաւ գիտէ, որ այսօր աշակերտների դասարանական փոխադրութեան օրն է, և մինչև այժմ քո վերագարձին է սպասում:

ԱՐԱՄ.—Իսկ եթէ ես իմ վկայականի փոխարէն մի ուրիշ վկայական ցոյց տամ հայրեկին, օրինակի համար իմ ընկեր Պարոյրին, որ իբրև ամենավերջին աշակերտն է փոխադրել, կարծեմ այդ բանը աչքի չի ընկնի:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Ճիշտն ասած, ասածդ չեմ հասկանում...

ԱՐԱՄ.—Բայց Վարդուհի, որքան բթամիտ ես, իսկոյն երևում է, որ դպրոցի հոտն անգամ չես տես: Ուզում եմ ասել, որ կարծեմ իմ ընկեր Պարոյրի վկայականը և հայրեկին կըհաւատացնեմ, որ դա իմն է: Վկայա-

կանը մի լրագրի մէջ այնպէս կփաթաթեմ, որ նրա վրայ նշանակւած անունը և ազգանունը չընկնայ:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Յետոյ: Բայց չէ՞ որ այդ բանը միանգամ կ'ըսուի:

ԱՐԱՄ.—Իհարկէ, բայց ոչ այսօր: Գոնէ կտանամ ընծաներս և Հայկանոյց մօրաքրոջ հետ կրկէս կգնամ: Իսկ վաղը հայրիկին կհաւատացնեմ, որ իմ ընկեր Պարոյրը իր վկայականը սխալմամբ ինձ է տւել:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Բայց Արամ, այդ...

ԱՐԱՄ.—(Խօսքը բնօրինակով): Լաւ եմ մտածել. դրանից աւելի յարմար բան չի լինի: Մի բան ասեմ, Վարդուհի. իսկոյն վաղից Պարոյրենց տունը, որ դիտես, մեր փողոցի անկիւնունն է գտնուում: Պարոյրի հայրը արդէն կարդացած կլինի վկայականը՝ Խնդրի իմ կողմից նրա վկայականը՝ Եւ նրբ ստանաս, փաթաթիր նրա եզրերը մի լրագրի մէջ և բեր այստեղ ինձ տուր, իբր թէ Պարոյրը դպրոցում վերցրել է և ինձ ուղարկել: Յետոյ այնպէս կհասցնենք, իբր թէ շտապելով նա իր վկայականը իմ փոխարէն ուղարկել է:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Բայց Արամ, չէ՞ որ...

ԱՐԱՄ.—Ուրիշ ոչինչ չեմ ուզում լսել, դու խոստացել ես ինձ օգնելու և այժմ պէտք է կտարես խոստումդ: (Խնդրելով): Վարդուհի ջան, Վարդուհի, մտիւր դրութեանս մէջ...

ՎԱՐԴՈՒՀԻ.—Իսկապէս մարդ պէտք է քար սիրտ ունենայ, որ այսքան խնդրելուց յետոյ չկատարի նրա ասածը, բայց դրանից, եթէ 'ի նկատի ունենանք որ մեղաւորը ոչ թէ Արամն է, այլ այն անպիտան լատինները, որից ոչ մի մարդ բան չի հասկանում:

6) ԴՆՈՐԳ ՎԵՀԱՊԵՏԵԱՆ ԵՒ ՀԱՅԿԱՆՈՅՇ

(Ներսէս Են մտնում կողքի դռնով):

ԱՐԱՄ.—Տէր Աստուծ, ահա հայրիկը: Շուտ արա, Վարդուհի, ծածկիր վկա-

յականս և գնայ: (Վկայականը իր ետեւն է պահում):

ՎԱՐԴՈՒՀԻ.—(Վերցնում է վկայականը դնում եւ ծածկում է գամբիւղում):

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Տեսնում ես, Արամը արդէն վերադարձել է:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Վարդուհին էլ է եկել: Ինչ լաւ եղաւ, տուր ինձ: (Վերցնում է նրա ձեռքից գամբիւղը):

ՎԱՐԴՈՒՀԻ.—(Ինքն իրան): Տէր Աստուծ, միայն թէ բաց չանի գամբիւղը: Իսկ այժմ ես շտապեմ վկայականը բերելու: (Միջին դռնով դուրս է գնում):

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—(Ուրախ) չը՛մ, Արամ, քէֆդ ի՞նչպէս է:

ԱՐԱՄ.—(Կանխելով եւ շփոթելով): Ես... ես ուշացայ... փոխադրութիւնը ժամը 8-ին է եղել... իսկ Պարոյրը... իմ վկայականը...

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Ի՞նչ ես խօսում: Կարճն ասա փոխադրութիւնը ես, թէ ոչ:

ԱՐԱՄ.—Ե՛ս... ես չեմ իմանում, Պարոյրը վկայականս իր հետ է վերցրել և փողոցում պատահեցի ուրիշ դասարանի մի քանի աշակերտների, որոնք ինձ ասացին... և յետոյ... և ես... յետոյ...

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Մի վախենանք Արամ, դու բոլորովին յուզւել և զոզոզում ես, նստիր այստեղ, Վարդուհուն կուղարկենք վկայականը բերելու: Ո՞րտեղ է ավրում Պարոյրը:

ԱՐԱՄ.—Ես Վարդուհուն արդէն ուղարկել եմ... կարծեմ նա արդէն գնացած պէտք է լինի:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Աւելի լաւ, ես դովացնելու համար քեզ մի բան պէտք է տամ: (Մտնում է այն գամբիւղին, որ մի քիչ առաջ ինքը դրել էր սեղանի վրայ): Սա քո սիրտն է:

ՎԱՐԴՈՒՀԻ.—(Միջին դռնից շտապով հերս է մտնում): Ահա և վկայականը:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—(Չամբիւղը կրկին

ցած դնելով): Տւէք ինձ: (Վերցնում է վկայականը եւ տալիս Վեհապետեանին): Դէ՛հ կարգա՛ս, փեսայ:

ԱՐԱՄ.—(Իողողալով լինել է սեղանին: Վարդուհին բեմի խորքումն է. Սեհեակի մեղսեղում կանգնած է Վեհապետեանը, նրա ետեւը Հայկանոյցը, լարւած ուշադրութամբ):

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—(Բաց է անում վկայականը: Բնօրինակը լուրջիւ, որի ժամանակ աղմկելով րեքրում է վկայականը): Բաւարար... բաւարար... բաւարար... (բարձր ձայնով): 32 աշակերտներից իբրև ամենավերջինը փոխադրում է երկրորդ դասատուն:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—(Վազելով Արամի մօտ եւ գրկելով): Այժմ արժէ քեզ համբուրել, սիրելիս:

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Փառք Աստուծոյ, թէ և ամենավերջին աշակերտ, բայց այնուամենայնիւ փոխադրւել ես: Յոյս ունեմ, որ այսուհետեւ դասերից աւելի լաւ կհետեւս Այժմս կարող ես մօրաքրոջ ընծաները ստանալ. մի ընծայ էլ ես կտամ: (Հանում է իր քրտակը): Ահա քեզ մէկ բուրբի, դրանով դնեք սրտիդ ուղածը: Գուցէ այդ բանը քեզ խրախուսի հետեւալ ուսումնական տարւայ ընթացքում աւելի ջանասէր լինելու:

ԱՐԱՄ.—(Խոռոված վերցնում է փողը): Շնորհակալ եմ, հայրիկ, ես, ես... կաշխատեմ...

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Բայց տես որքան գունատւել է Արամը, կարծես պատի գոյն է ստացել: (Նորից գամբիւղին մօտեցնելով): Արի՛ Արամ, մի քիչ դովացրու քեզ:

ՎԱՐԴՈՒՀԻ.—(Իսկոյն մօտենում է Հայկանոյցին եւ ուզում է գամբիւղը վերցնել): Թո՛ղ աւէք, օրիորդ, այդ խաղողը պնակի մէջ դնելու:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Ինչո՞ւ համար դուր տեղը նեղութիւն քաշել. Արամին դուր կգայ հէնց գամբիւղից ուտելը: (Ուզում

է զարխողը բաց անել):
ՎԱՐԴՈՒՀԻ.—(Պիւնդ բռնելով գամբիւղը): Բայց օրիորդ...

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Այդ ի՞նչ էք ուզում անել, Վարդուհի: Ես ձեռքանութիւնս ներ չեմ սիրում:

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—(Միւրեւ այդ ժամանակ Արամին էր դիտում). Այն, այն, Արամին շուտով մի բան աւէք ուտելու. նա բոլորովին գունատւել է. հաւանորէն յուզմունքից նա այսօր ոչինչ չի կերել:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—(Չամբիւղը բաց անելով): Ինչ լաւ խաղող է... բայց այն ինչ է: (Հանում է վկայականը եւ կարդում): Վկայական Արամ Վեհապետեանի:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Տէր Աստուծ...

ԱՐԱՄ.—(Սարսափում է). Ա՛խ... դա... հինն է...

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—(Վկայականը առնում է ձեռքից): Ո՛չ, ոչ, քո վկայականն է, Արամ. այս ի՞նչ է...

ԱՐԱՄ.—Գուցէ փոխւել է, սխալեցրել են...

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—(Կարդալով): „Չէ փոխադրում անբաւարար աշխատասիրութեան համար“: (Կարճատեղնօրնակաբ լուրջիւ անկնքը գարմացած իրար են նայում):

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—(Բարձր, դանդաղ եւ խիստ ձայնով): Այս ի՞նչ է նշանակում, Արամ:

ԱՐԱՄ.—Հայրիկ... ես... (Ձեռքերով ծածկում է երեսը եւ լաց լինում),

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—(Առաջաւայ պիս): Ուրեմն քոնի փոխարէն դու մեզ խաբել և ուրիշի վկայական ես ցոյց տւել:

ԱՐԱՄ.—(Լաց լինելով): Հայրիկ...

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Հարցրու մօրաքրոյր Հայկանոյցին և կտեսնես, որ ես թոյլ եմ աւել քեզ ընծաներ տալու և կրկէս

տանելու, այն պայմանով միայն, որ փոխադրած կլինէիր: Բայց այժմ...

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Այն, փեսայ, դու իրաւունք ունիս. Արամը այժմ արժանի է խիստ պատժի: Դրա համար էլ ես զրկում եմ նրան երկու զւարձութիւններից էլ և եթէ նա չուզուի, ես նրան երբէք չպէտք է սիրեմ:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Ա՛խ, օրիորդ, այդ բանում ես էլ մեղաւոր եմ:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Ամաչեցէք, Վարդուհի, ինչպէս էք ձեզ թոյլ տալիս մեզ խաբելու:

ՎԱՐԴՈՒՀԻ.—Պատճառը Արամին շատ սիրելն է:

ՀԱՅԿԱՆՈՅՇ.—Հէնց զրա համար էլ

պէտք է ձեր կողմից նպաստէք երեխային կրթելու և ոչ թէ փչացնելու:

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—Այժմ դնանք Հայկանոյշ, երեք օր շարունակ Արամը մեր աչքին չպիտի երևայ: Նա պէտք է մենակ ուտի, խաղայ, որպէսզի կարողանայ լաւ մտածել, թէ որքան վատ վարեցաւ մեզ հետ: (Հայկանոյշի նետ դուրս է գնում կողքի դռնից):

ԱՐԱՄ.—(Լալիս է եւ ուզում է հետեւել նրանց): Հայրիկ... մօրաքոյր:

ՎԵՀԱՊԵՏԵԱՆ.—(Զի բողբոս Արամին): Ո՛չ... արդէն ուշ է... գնա...

ՎԱՐԴՈՒՀԻ.—Օ՛հ, ես անպիտան Վարդուհիս: Այժմ ես ինքս էլ չգիտեմ, թէ ով էր մեզանից աւելի յեմարը, եւ թէ Արամը:

ՎԱՐԱԳՈՅՐ



Faint, illegible text on the left side of the page, possibly bleed-through from the reverse side.

Faint, illegible text on the right side of the page, possibly bleed-through from the reverse side.

Handwritten text or signature at the bottom of the page.



$[7n + 4n]$

9 U. P

N^o: 12270